

1. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Տիգրան Վլադիմիրի Հարությունյան Լիլիթ Նորայրի Սարգսյան Արմինե Վարդանի Գևորգյան

Հոդվածը ստացվել է՝ 24.03.2022թ., գրախոսման ուղարկվել է՝ 28.03.2022թ., տպագրման երաշխավորվել է՝ 18.04.2022թ.

Ներածություն: Ներդրումների ներգրավումը հանդիսանում է զարգացող և զարգացած երկրների արտաքին տնտեսական քաղաքականության անբաժան մասը: Վերջին տարիներին Հայաստանում հայտնի իրողությունների արդյունքում առաջացած հիմնախնդիրները տնտեսագետների մի մասի մոտ լուրջ մտահոգություններ են առաջացնում առ այն, որ առաջիկայում Հայաստանում դժվար կլինի իրականացնել ներդրումների ներգրավման արդյունավետ քաղաքականություն: Այդուհանդերձ, պետք է նշել, որ համաշխարհային տնտեսության մեջ Հայաստանը միակը չէ, որ տուժել է պատերազմից: Պատմությանը հայտնի են Ճապոնիայի, Սինգապուրի և այլ երկրների օրինակները, որոնք տուժելով պատերազմից և ունենալով գրեթե ամբողջությամբ քայքայված տնտեսություն, կարողացել են արդյունավետ տնտեսական քաղաքականության շնորհիվ կառուցել աճող տնտեսություն և նվազ, քան հիսնամյա ժամանակահատվածում մի շարք ցուցանիշներով դառնալ աշխարհի առաջատար երկրներից մեկը: Նմանատիպ երկրների փորձը հուսադրող և միևնույն ժամանակ նաև՝ պարտավորեցնող է:

Միջազգային փորձը վկայում է, որ ճգնաժամային իրավիճակում հայտնված և հատկապես՝ փոքր տնտեսություն ունեցող երկրները սովորաբար ներքին ֆինանսական ռեսուրսների սակավության պատճառով ավելի արագ աճի կարողանում են հասնել օտարերկրյա ներդրումների ներգրավման շնորհիվ: Ուստի սխալված չենք լինի, եթե ասենք, որ ներկայում ՀՀ տնտեսության զարգացման համար հատկապես՝ իրական հատվածում, ներդրումների ներգրավումը գրեթե չունի այլընտրանք:

Հոդվածի նպատակն է բացահայտել ՀՀ-ում ներդրումների ներգրավման համար հնարավոր գրավիչ ոլորտները՝ բազմաթիվ վերլուծության հիման վրա: Այդ նպատակին հասնելու համար լուծվել են հետևյալ խնդիրները. վերլուծել առկա գրականությունը, բացահայտել տվյալ ոլորտում առկա փաստաթղթավորված խնդիրները, ամփոփ ներկայացնել ՀՀ պետական քաղաքականության ապագա ռազմավարությունը, վեր հանել ՀՀ արտահանման ներուժ ունեցող ոլորտները:

Գրականության վերլուծություն: Տնտեսագիտական գրականության, ինչպես նաև տարբեր տնտեսագետների կողմից կատարած վերլուծությունների մեջ

առանձնացվում են ներդրումների ներգրավման տեսությունների ամենատարբեր ուղղություններ, ուստի հիմնվելով մասնագիտական գրականության վրա՝ ամփոփ կներկայացնենք ներդրումների ներգրավման տեսությունների մինչ օրս հայտնի ուղղությունները՝ հնարավորինս լայն ընդգրկվածությամբ:

Այսպիսով, համաձայն մասնագիտական գրականության¹, ներդրումների ներգրավման տեսությունները կարելի է ներկայացնել հետևյալ խմբավորումներով՝ 1. Ներքինացման (internalization) և շուկայի անկատարության (որոշ աղբյուրներում՝ շահույթի վերադարձելիության և մոնոպոլ առավելության, կամ Բազմազգ կորպորացիաների և շուկայի անկատարության) տեսություն, 2. Ապրանքի արտադրության կենսացիկլի տեսություն, 3. Միջազգային կորպորացիաների տեխնոլոգիական տեսություն, 4. Օլիգոպոլիայի և ներդրումների ներգրավման տեսություն, 5. Թռչող սագերի տեսություն և այլն:

Ներքինացման (internalization) և շուկայի անկատարության տեսության նախահիմքերը դրվել են դեռևս 1960թ. ՄակԴուգալի կողմից, ով Ավստրիական օրինակով փորձում է ցույց տալ երկրի իրական եկամտի տարբերությունը ՕՈԻՆ ներգրավումից առաջ և հետո²: Նույն գաղափարը վերլուծել է Հայմերը 1960թ.՝ առաջին անգամ մեկնաբանելով այն բազմազգ կազմակերպությունների տեսանկյունից իր թեկնածուական ատենախոսությունում, որը հրատարակվել է հետմահու՝ 1976թ.: Նա հանգել է այն եզրակացության, որ բազմազգ կազմակերպությունները ներդրումներ են կատարում այն երկրներում, որոնցում գործող կազմակերպությունների համեմատ կարող են ունենալ մոնոպոլ առավելություններ՝ շնորհիվ այն հումքի, աշխատուժի և այլ գործոնների, որոնք կկարողանան օգտագործել տվյալ երկրում ներդրում կատարելով³:

Այս տեսության մաս է կազմում նաև 1969թ. Կինդլերգի կողմից առաջ քաշված պնդումն առ այն, որ ՕՈԻՆ ներհոսքը մեծապես կախված է ընդունող երկրի շուկայի անկատարությունից, որոնք կարող են արտահայտվել ընդունող երկրում գործող ձեռնարկությունների առևտրային քաղաքականությունների, արտադրության գործոնների օգտագործման, մասշտաբի էֆեկտի տնօրինման և կառավարության կողմից վարվող արտաքին տնտեսական քաղաքականության մեջ առկա թերացումների տեսքով⁴:

¹ Осеи Д. Д., ОБЗОР ТЕОРИИ ПРЯМЫХ ИНОСТРАННЫХ ИНВЕСТИЦИЙ (ПИИ), Вестник Ростовского государственного экономического университета (РИНХ), 2016 № 2 (54), стр.196-202, <https://cyberleninka.ru/article/n/obzor-teorii-pryamyh-inostrannyh-investitsiy-pii/viewer>
Marandu Edward E. , Ditshweu Tebo, An Overview of the Key Theories of Foreign Direct Investment: The Way Forward, Advances in Social Sciences Research Journal – Vol.5, No.12, 2018, p. 30-39, DoI:10.14738/assrj.512.5741.

² MacDougall, G. D. A. The benefits and costs of private investment from abroad: A theoretical approach. Economic Record, 26, 1960. p. 13-35

³ Hymer S. H., The International Operations of National Firms: A Study of Direct Foreign Investment, PhD Dissertation, Published posthumously, The MIT Press, Cambridge, Mass, 1976, p.43-44, <https://dspace.mit.edu/handle/1721.1/27375>

⁴ Հեյդարի Սոհուեն, ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՕՏԱՐԵՐԿՐՑԱ ՈՒՂՂԱԿԻ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ, թեկնածուական աստիճանի հայցման ատենախոսություն, 2018, էջ 32-33

Ապրանքի արտադրության կենսացիկլի տեսության առաջամարտիկներից Վեռնոնը ցույց է տալիս, թե ինչպես է կատարվում արտերկրում ներդրում կատարելու և տեղում արտահանելու ու արտերկիր արտահանելու քաղաքականությունների միջև ընտրությունը՝ կախված ապրանքի կենսացիկլից: Վեռնոնը պնդում է, որ ընկերությունը տվյալ որոշումը կայացնում է կախված նրանից, թե տվյալ պահին ապրանքը իր կենսացիկլի որ փուլում է (նորարարություն, աճ, հասունություն, անկում) գտնվում¹:

Միջազգային կորպորացիաների տեխնոլոգիական տեսության հիմնադիրներից Ջ.Գելբրեյթը միջազգային կորպորացիաների զարգացումը պայմանավորում է տեխնոլոգիական գործոններով, որոնք նրանց հնարավորություն են տալիս շահել արտերկրյա շուկաների անկատարությունից²:

Օլիգոպոլիայի և ներդրումների ներգրավման տեսությունը կրկին անդրադառնում է շուկայի անկատարությանը, տվյալ դեպքում՝ օլիգոպոլիաների առկայությանը: Տեսության կողմնակիցներից Կնիկերթոկերը պնդում, որ կազմակերպությունները օլիգոպոլ շուկաներում հետևում են միմյանց կայացրած որոշումներին և հաճախ կրկնօրինակում են այն քայլերը, որ կիրառում է մրցակից կազմակերպությունը: Հեղինակը տվյալ գաղափարը բացատրում է նրանով, որ ֆիրմաները արտերկրում ներդրումներ կատարելիս բախվում են տվյալ երկրում գործունեություն ծավալելու համար ծախսերի հաշվարկման դժվարությունների հետ: Այդ պատճառով հետևում են օլիգոպոլ շուկայի մյուս մասնակիցներին՝ հասկանալու համար արդյոք նրանց կողմից այս կամ այն երկրում կատարած ներդրումն արդարացված է և դրանից հետո միայն որոշում կայացնում ներդրում կատարելու մասին³:

Թռչող սազերի տեսության նախահայր կարելի է համարել ճապոնացի գիտնական Ակամացուին: Նա դուրս է բերել մի հետաքրքիր օրինաչափություն համաձայն որի երկիրը ներմուծում է որոշակի ապրանք այնքան ժամանակ, մինչև որ սկսում է այդ ապրանքի տեղական արտադրությունը, որն էլ հետագայում զարգանալով՝ դառնում է արտահանվող ապրանք⁴:

¹ Vernon R.. International investments and international trade in the product life cycle, Quarterly Journal of Economics, May, 1966, pp. 190–207, <https://doi.org/10.2307/1880689>
<http://bev.berkeley.edu/ipe/readings/International%20Investment%20and%20International%20Trade%20in%20the%20Product%20Cycle.pdf>

² Dunn S.P., Pressman S., The economic contributions of John Kenneth Galbraith, Review of Political Economy, Vol. 17, No. 2, 2005, p. 171 /pp. 161–209/, DOI:[10.1080/09538250500067254](https://doi.org/10.1080/09538250500067254)
https://www.researchgate.net/publication/24088369_The_Economic_Contributions_of_John_Kenneth_Galbraith

³ Nayak, Dinkar; Choudhury, Rahul N. (2014) : A selective review of foreign direct investment theories, ARTNeT Working Paper Series, No. 143, Asia-Pacific Research and Training Network on Trade (ARTNeT), Bangkok, p.8

⁴ Akamatsu Kaname, The Flying Geese Pattern of Industrial Development in Newly Industrializing Countries, Essays in Honor of Dr. Ueda Teijir, Vol. 4, Research on Population and the East Asian Economy, 1943, pp. 565–577

Հետագայում կրկին ճապոնացի գիտնականներ Կոջիման¹ և Օզավան² «Թռչող սագերի» տեսությունը բացատրեցին երկրի առաջանցիկ աճի տեսանկյունից:

Մեթոդաբանություն: Հետազոտության համար տեսական, մեթոդաբանական ու տեղեկատվական հիմք են հանդիսացել հայ և օտարերկրյա գիտնականների կողմից մշակված գրքերն ու վերլուծությունները, տարբեր հեղինակների գիտական հոդվածներն ու միջազգային գիտաժողովների նյութերը, միջազգային կազմակերպությունների հետազոտությունները, ինչպես նաև այս թեմայով պաշտպանած ատենախոսությունները:

Կատարվող հետազոտության ընթացքում կիրառվել են տվյալների հավաքման, վերլուծության և մշակման, սոցիոլոգիական հարցման, և այլ մեթոդներ:

Վերլուծություն: Ներդրումների համար նպաստավոր ոլորտների բացահայտման համար մեր կողմից իրականացվել է հետևյալ 4 քայլից բաղկացած մոտեցումը՝

1. Փաստաթղթային վերլուծության միջոցով բացահայտել ներդրումների համար նպաստավոր ոլորտները ՀՀ-ում,
2. Պատկան մարմինների պատասխանատուների հետ հարցման միջոցով բացահայտել ներդրումների համար նպաստավոր ոլորտները ՀՀ-ում,
3. Բացահայտել ներդրումների համար նպաստավոր ոլորտները ՀՀ-ում՝ հիմնվելով այդ ոլորտների արտահանման բացահայտ համեմատական առավելության ինդեքսի վրա,
4. Բացահայտել ՀՀ ներդրումների համար նպաստավոր ոլորտները՝ ըստ ՕՈԻՆ կանոնակարգման սահմանափակման ինդեքսի (FDI Regulatory Restrictiveness Index)³:

Իրականում վերոնշյալ քայլերից 2-րդի անհրաժեշտությունն առաջացավ հընթացս, քանի որ փաստաթղթային վերլուծության ընթացքում պարզ դարձավ, որ ներկայում ՀՀ տնտեսության համար գերակա համարվող ոլորտների զարգացման ընթացքը լիարժեք փաստաթղթավորված չէ, և այդ բացը պետք է լրացնել հարցումների միջոցով:

1. Փաստաթղթային վերլուծության միջոցով միջոցով ՀՀ-ում ներդրումների համար նպաստավոր ոլորտների բացահայտում

Փաստաթղթային վերլուծության նպատակն է պարզել, թե ներկայում Հայաստանի որ ոլորտների զարգացման ռազմավարությունն է փաստաթղթավորված, որ ոլորտներում են եղել մշակված և ներդրված զարգացման ռազմավարություններ և արդյոք դրանց արդյունքում տվյալ ոլորտը հասել է զարգացման թիրախային մակարդակի և կարող է գրավիչ լինել ներդրողների համար:

¹ Kojima Kiyoshi, The “flying geese” model of Asian economic development: origin, theoretical extensions, and regional policy implications, Journal of Asian Economics 11 (2000) p.375–401

² Ozawa Terutomo, The (Japan-Born) “Flying-Geese” Theory of Economic Development Revisited—and Reformulated from a Structuralist Perspective, center on japanese economy and business, Working Paper Series October 2010, No. 291, <https://core.ac.uk/download/pdf/161436271.pdf>

³ <https://stats.oecd.org/Index.aspx?datasetcode=FDIINDEX>

Փաստաթղթային վերլուծության արդյունքում պարզ դարձավ, որ ներկայումս մշակված և գործունեության մեջ դրված ոլորտային զարգացման ռազմավարությունն առկա է միայն **գյուղատնտեսության** համար¹:

Այդուհանդերձ առկա են նաև այլ ոլորտների զարգացման ռազմավարություններ, որոնք մշակվել են նախկինում, սակայն կամ առհասարակ կյանքի չեն կոչվել, կամ չեն հասել դրանցում նախանշած թիրախային զարգացման ցուցանիշներին: Մասնավորապես՝ Ճշգրիտ ճարտարագիտության 2011-2020թթ. ոլորտային ռազմավարության թիրախները², ինչպիսիք են ռեզիդնալ նշանակության միջազգային համալսարանի և մասնագիտացված ճարտարագիտական քլաստերների ձևավորումը, երկրի բերնդինգը ճարտարագիտության ասպարեզում, գիտելիքի առևտրայնացման համակարգի հիմնումը և այլն, մնացել են հիմնականում անկատար, ինչի արդյունքում ոլորտը մինչ օրս գրավիչ չի դարձել ներդրումների համար:

Նմանատիպ իրավիճակ է Դեղագործության և բիոտեխնոլոգիաների 2011-2020թթ. ոլորտային ռազմավարության³ կատարողականի տեսանկյունից: Մասնավորապես՝ անկատար են մնացել տեղական հումքային բազայի ստեղծումը, առաջատար անդրազգային կազմակերպությունների ներգրավումը, արտոնագրային ժամկետը լրացած դեղերի հիման վրա հայկական բրենդավորված նոր ջնեներիկ դեղերի արտադրության նախագիծը և այլն:

Մյուս ոլորտային ռազմավարությունը, որն ի տարբերություն նախորդների բավականաչափ կետերի կատարողականություն է ապահովել, Կոնյակագործության ոլորտի 2011-2020թթ. ռազմավարությունն է⁴: Այս ռազմավարության կատարման մեջ թերևս ամենամեծ թերացումը կարող ենք համարել արտահանման շուկաների և բրենդինգի մասով նախանշված թիրախներին չհասնելու հանգամանքը:

Փաստաթղթավորված զարգացում նախատեսված է եղել նաև ժամագործության և ոսկերչության ոլորտների համար⁵, որը ևս հիմնականում չի իրականացվել: Մասնավորապես՝ անկատար են մնացել առաջնության ընդհանուր ինտերնետային պորտալի գործարկումը, միջազգային մասնագիտական մեդիայի միջոցով ոլորտների առաջնությունը, ոլորտում ՕՈՒՆ ներգրավումը և այլն:

Աղամանդագործության ոլորտի զարգացման ռազմավարությունը⁶ ևս կարող ենք համարել չիրագործված: Մասնավորապես՝ անկատար են մնացել այնպիսի կարևոր դրույթներ, ինչպիսիք են աղամանդի մշակման արտապատվիրման ծավալների աճը՝ ի հաշիվ նոր գլոբալ ընկերությունների ներգրավման, տեղա-

¹ ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարություն՝ <https://mineconomy.am/media/10030/Razmavarutyun.pdf> վերջին մուտքը՝ 10.10.2021թ.

² <https://www.mineconomy.am/media/2239/1480.pdf> վերջին մուտքը՝ 10.10.2021թ.

³ <https://www.mineconomy.am/media/2238/1479.pdf> վերջին մուտքը՝ 10.10.2021թ.

⁴ <https://www.mineconomy.am/media/2237/1478.pdf> վերջին մուտքը՝ 10.10.2021թ.

⁵ <https://www.mineconomy.am/media/2235/1476.pdf>, <https://www.mineconomy.am/media/2234/1475.pdf> վերջին մուտքը՝ 10.10.2021թ.

⁶ <https://www.mineconomy.am/media/2233/1474.pdf> վերջին մուտքը՝ 10.10.2021թ.

կան ընկերությունների հզորացումը և տարածաշրջանային առևտրի կենտրոնի ձևավորումը և այլն:

Տեքստիլի և տրիկոտաժի ոլորտների զարգացման ռազմավարությունը¹ ևս կարելի է գնահատել թերի իրականացված, քանի որ մինչև 2020թ. արդեն իսկ պետք է ապահովված լինե՝ր հետևյալ դրույթները, որոնք մինչ օրս իրականացված չեն՝ գործվածքի տեղական արտադրության հիմնում, 3-5 ռեզիոնալ բրենդերի առկայություն և այլն:

Նախկինում մշակված և մինչ օրս ամբողջապես կյանքի չկոչված հաջորդ ռազմավարությունը կոշիկի արտադրության զարգացման ռազմավարությունն է²: Փաստացի տապալված է հետևյալ դրույթների իրականացումը՝ կոշիկի առկա արտադրական հզորությունների վերագործարկում, հայկական արտադրանքի բրենդի ստեղծում և մասշտաբային արտահանում և այլն:

Ըստ որում, չենք կարող ռազմավարությունների թերակատարման փաստը արդարացնել 2018թ. իշխանափոխությամբ, քանի որ մինչ այդ դրանց կատարման համար առկա էր յոթնամյա ժամանակահատված: Ստացվում է, որ փաստաթղթային վերլուծության արդյունքում այս պահի դրությամբ ներդրումների համար նպաստավոր ոլորտներ չենք կարող արձանագրել, միայն գյուղատնտեսության ոլորտը կարող է հավակնել առաջիկա տարիներին դառնալ գրավիչ ոլորտ, քանզի դրա զարգացման ռազմավարության մեջ ներառված դրույթները առկա են նաև Կառավարության գործողությունների ծրագրում:

2. Պատկան մարմինների պատասխանատվության հետ հարցման միջոցով ՀՀ-ում ներդրումների համար նպաստավոր ոլորտների բացահայտում

Հարցումներն անցկացվել են ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի և ՀՀ Էկոնոմիկայի նախարարության համագործակցության շրջանակում՝ համադրելով այն համագործակցության շրջանակում կատարվող մեկ այլ՝ ՀՀ-ում մասնագիտական պահանջարկի կանխատեսման, աշխատանքների հետ: Մեր կողմից պետական գերատեսչություններում անցկացված հարցումների հիման վրա փորձել ենք պարզել, թե որոնք են տվյալ պետական գերատեսչության համար հեռանկարային զարգացման ուղղությունները առաջիկա 3, 5 և 10 տարիների կտրվածքով: Հարցումներն իրականացրել ենք բոլոր պետական գերատեսչություններում՝ բացառությամբ Պաշտպանության և Շրջակա միջավայրի նախարարությունների, որոնք հրաժարվեցին պատասխանել հարցմանը: Տվյալ պարագայում մեզ համար առանցքային էր ՀՀ Էկոնոմիկայի նախարարության փոխնախարարների հետ հարցումը, սակայն մյուս պետական գերատեսչություններում անցկացված հարցումները կարող էին հնարավորություն տալ բացահայտելու այնպիսի ոլորտների պոտենցիալ զարգացման հնարավորություն, որոնք ներկայում չի նախատեսում Էկոնոմիկայի նախարարությունը, սակայն հետագայում կնախատեսի՝ ըստ պետության զարգացման առաջնահերթությունների:

¹ <https://www.mineconomy.am/media/2232/1473.pdf> վերջին մուտքը՝ 10.10.2021թ.


² <https://www.mineconomy.am/media/2231/1472.pdf> վերջին մուտքը՝ 10.10.2021թ.

Այսպիսով՝ հարցման ընդհանուր դիտարկումների թիվը 17 է, հարցումն անցկացվել է դեմ առ դեմ հանդիպումների միջոցով՝ 2021թ. հոկտեմբերի 15-ից մինչև նոյեմբերի 5-ը ընկած ժամանակահատվածում: Հարցաթերթիկը պարունակել է 3 հիմնական հարց՝

- Ո՞ր ոլորտներն են համարվում զարգացման համար գերակա առաջիկա 3, 5, 10 տարիների համար,
- Արդյո՞ք առկա է նշված ոլորտների զարգացման ռազմավարություն կամ ներառվա՞ծ են դրանք ՀՀ Կառավարության ծրագրում
- Ի՞նչ գործոնների ազդեցության հիման վրա է տվյալ ոլորտը համարվել գերակա (պետության ռազմավարական գերակայություն, զլոբալ միտումներ, ԵԱՏՄ միասնական շուկայի զարգացումներ, արտահանման պոտենցիալ և այլն):

Ամփոփ ներկայացնենք ՀՀ տնտեսության այն ոլորտները, որոնք պետական գերատեսչությունները դիտարկում են որպես զարգացման գերակայություն առաջիկա 10 տարվա համար՝ նշելով, որ ներկայում դրանց զարգացմանն ուղղված ռազմավարությունները մշակման փուլում են և նախատեսվելու են բազմաթիվ արտոնություններ տվյալ ոլորտում ներդրում կատարող տնտեսվարող սուբյեկտների համար:

Հարցման արդյունքում պարզ դարձավ, որ Հայաստանի համար առաջիկա 10 տարիների կտրվածքով զարգացման գերակայություն և ըստ այդմ նաև՝ ներդրումների համար նպաստավոր ոլորտներ կդառնան հետևյալները՝ Գյուղատնտեսություն, Մետալուրգիա, Քիմիական արդյունաբերություն, Դեղագործություն, Ոսկերչություն, Աղամանդագործություն, Էներգետիկա (հատկապես՝ արևային էներգիայի արտադրություն և արևային պանելների արտադրություն), SS (հատկապես շեշտադրված՝ արհեստական բանականություն, ռոբոտաշինություն, քվանտային ինժեներիա):



Գծապատկեր 1. Հարցման արդյունքում բացահայտված ՀՀ առաջիկա 10 տարիների համար գերակա ոլորտների փաստաթղթավորվածությունը և արտահանման պոտենցիալը¹

¹ Գծապատկերը կազմված է հեղինակի կողմից՝ ըստ հարցման արդյունքների

Վերոնշյալ ոլորտները առաջիկայում կդառնան ներդրումների համար ամենագրավիչ և հիմնական ներդրումներ կլանող ոլորտները: Նշենք, որ այս ոլորտները թերևս հնարավոր չէր լինի բացահայտել որևէ այլ վերլուծության միջոցով, քանի որ դրանց գերակայությունը դեռևս փաստաթղթավորված չէ՝ բացառությամբ գյուղատնտեսության ոլորտի, ընդ որում՝ բոլոր ոլորտներն ունեն արտահանման պոտենցիալ՝ գծապատկեր 1:

3. ՀՀ-ում ներդրումների համար նպաստավոր ոլորտների բացահայտում՝ բացահայտ համեմատական առավելության ինդեքսի հիման վրա

Բացահայտ համեմատական առավելության ինդեքսը մշակվել է Բելա Բալասայի կողմից: Այս ինդեքսը ցույց է տալիս որևէ երկրի որևէ ոլորտի արտահանման համեմատական առավելությունն աշխարհում, առանձին երկրի կամ ինտեգրացիոն միավորման շուկայում: Ինդեքսի հաշվարկման մեթոդաբանությունը հետևյալն է $FZU_w = (X_w X) / (x_{wW} / X_w)$, որտեղ՝ x_w -ն դիտարկվող երկրում ա-րդ ճյուղի արտահանումն է դեպի նշված երկրի, ինտեգրացիոն միավորման կամ համաշխարհային շուկա, X -ը՝ դիտարկվող երկրի ընդհանուր արտահանումը դեպի նույն շուկա, x_{wW} -ն՝ ա-րդ ճյուղի համաշխարհային արտահանումն է դեպի նշված երկրի, ինտեգրացիոն միավորման կամ համաշխարհային շուկա, իսկ X_w -ն ընդհանուր համաշխարհային արտահանումը դեպի դեպի նշված երկրի, ինտեգրացիոն միավորման կամ համաշխարհային շուկա ¹: Այն դեպքում, երբ FZU -ն տվյալ ոլորտի համար գրանցում է «1»-ից մեծ արժեք, կարող ենք ասել, որ երկիրը տվյալ ոլորտի արտահանման համեմատական առավելություն ունի:

Բալասայի կողմից մշակված ինդեքսը որպես կանոն հաշվարկվում է Համաշխարհային բանկի կողմից, ուստի մենք վերլուծել ենք ցուցանիշը՝ ըստ Համաշխարհային բանկի հաշվարկած ինդեքսի:

Արդյունքում ստացել ենք, որ Հայաստանն արտահանման FZU ունի հետևյալ ապրանքատեսակների արտահանման համար.

- Կենդանական, բուսական ծագման արտադրանքների, պատրաստի սննդի, հանքահումքային մթերքների, մանածագործական իրերի և իրեր քարից, գիպսից, թանկարժեք և կիսաթանկարժեք քարերից արտադրատեսակների արտահանման բացահայտ համեմատական առավելություն ՀՀ-ն դիտարկվող ողջ ժամանակահատվածում ունեցել կամ ձեռք է բերել համաշխարհային և ԵԱՀԿ շուկաներում,
- պատրաստի սննդի և իրեր քարից, գիպսից, թանկարժեք և կիսաթանկարժեք քարերից արտադրատեսակների արտահանման բացահայտ համեմատական առավելություն ՀՀ-ն դիտարկվող ողջ ժամանակահատվածում ունեցել կամ ձեռք է բերել ԱՄՆ-ի և Կանադայի շուկաներում,
- պատրաստի սննդի արտահանման FZU ՀՀ-ն ողջ ժամանակահատվածում ունեցել է նաև Ճապոնիայի շուկայում:

¹ Balassa B., Trade Liberalisation and Revealed Comparative Advantage, The Manchester School, Vol. 33, May, 1965, pp. 99-123

Սա նշանակում է, որ վերոնշյալ ապրանքների արտադրության ոլորտները եղել և մնում են գրավիչ ներդրումների համար:

4. ՀՀ ներդրումների համար նպաստավոր ոլորտների բացահայտում՝ ըստ ՕՈԻՆ կանոնակարգման սահմանափակման ինդեքսի

Այս ինդեքսը հաշվարկվում է ՏՀԶԿ(OECD)-ի կողմից՝ յուրաքանչյուր երկրի թվով 22 ոլորտների և ենթաոլորտների համար: Ինդեքսը տատանվում է (0,1) միջակայքում, որտեղ «0» արժեքը նշանակում է, որ տվյալ երկրի տվյալ ոլորտը բաց է ՕՈԻՆ ներգրավման համար և չի պարունակում կանոնակարգման սահմանափակումներ, իսկ «1»-ը՝ հակառակը¹:

Համաձայն այս ցուցանիշի՝ Հայաստանում ՕՈԻՆ ներգրավման համար ամենամեծ կանոնակարգման սահմանափակումներ առկա են օդային տրանսպորտի, հեռուստա- և ռադիոհեռարձակման ոլորտներում, դրան հաջորդում են տեղեկատվությունն ու կապը, տրանսպորտը, հաշվապահությունն ու առուդիտը և բիզնես ծառայությունների մատուցումը՝ ըստ սահմանափակումների նվազման: Մյուս բոլոր ոլորտները՝ համաձայն այս ինդեքսի գերծ են սահմանափակումներից: Համեմատական վերլուծելով նաև ՀՀ դիրքը ըստ այս ցուցանիշի հարևան և ԵԱՀԿ անդամ-երկրների հետ՝ կատանանք հետևյալ պատկերը.

- Ընդհանուր ՕՈԻՆ կանոնակարգման սահմանափակումների ինդեքսով Հայաստանը զիջում է միայն Վրաստանին,
- Հայաստանը դիտարկվող երկրների շարքում միակն է, որ գերծ է ՕՈԻՆ կանոնակարգման սահմանափակումներից անշարժ գույքի ոլորտում, ուստի բոլոր դիտարկվող երկրների համար կարող է գրավիչ լինել ՀՀ անշարժ գույքի ոլորտում ներդրումների իրականացումը,
- ԵԱՀԿ երկրների շարքում Հայաստանն ամենաազատականն է հետևյալ ոլորտներում՝ գյուղատնտեսության և անտառային տնտեսության, ձկնաբուծության, հանքարդյունաբերության և բացահանքերի շահագործման, մշակող արդյունաբերության՝ ընդհանրապես, և սննդի, քիմիական արդյունաբերությունների՝ մասնավորապես, մետաղների և դրանցից իրերի արտադրության, սարքավորումների արտադրության, տրանսպորտային միջոցների արտադրության, էլեկտրաէներգիայի, շինարարության, առևտրի, հյուրանոցային և ռեստորանային տնտեսության, տեղեկատվության և կապի, հեռահաղորդակցության, բոլոր տեսակի ֆինանսական ծառայությունների, բիզնես ծառայությունների, ճարտարապետության և ինժեներիայի ոլորտներում ՕՈԻՆ կանոնակարգման սահմանափակումներից, ուստի կարող է գրավիչ լինել նշյալ ոլորտներում ՀՀ-ում ներդրումների իրականացումը ի համեմատ ԵԱՀԿ այլ երկրների,
- ԵԱՀԿ երկրների տվյալ ցուցանիշով Հայաստանը զիջում է միայն Բելառուսին տրանսպորտի և հատկապես՝ օդային տրանսպորտի ոլորտում և հաշվապահության ու առուդիտի ոլորտում, Ղազախստանին և Ղրղզստանին՝ օդային տրանսպորտի ոլորտում,

¹ <https://stats.oecd.org/Index.aspx?datasetcode=FDIINDEX>

- ՕՈԻՆ կանոնակարգման սահմանափակումների ազատությամբ Հայաստանը գերազանցում է Ռուսաստանին դիտարկվող բոլոր ոլորտներում, ուստի այն ներդրողները, որոնք դիտարկում են Հայաստանում կամ Ռուսաստանում ներդրում կատարելու հնարավորությունը, կարող են որոշում կայացնել՝ հոգուտ Հայաստանի,
- Հարևան երկրներից Հայաստանն ավելի ազատական է Վրաստանի համեմատ անտառային տնտեսության և ձկնաբուծության ոլորտներում, զիջում է Վրաստանին միայն բիզնեսի ծառայություններ, հաշվապահություն և աուդիտ, տեղեկատվության և կապի ու տրանսպորտի ոլորտներում,
- Ադրբեջանին զիջում է միայն հաշվապահություն և աուդիտ, տրանսպորտ և հատկապես՝ օդային տրանսպորտի ոլորտներում, ուստի մյուս ոլորտներում ներդրում կատարելիս Ադրբեջանի և Հայաստանի միջև ներդրողը կարող է առաջնայնությունը տալ Հայաստանին:
- գրեթե բոլոր ոլորտներում Հայաստանն ու Թուրքիան ունեն ՕՈԻՆ կանոնակարգման սահմանափակումների նույն ազատությունը, Թուրքիային Հայաստանը զիջում է միայն տեղեկատվության և կապի ոլորտում, իսկ հանքարդյունաբերության և բացահանքերի շահագործման, տրանսպորտի, բիզնես ծառայությունների, հաշվապահական և աուդիտի ծառայությունների ոլորտներում ներդրումները կատարողները Հայաստան/Թուրքիա այլընտրանքներից կարող են որոշում կայացնել հոգուտ Հայաստանի, քանի որ տվյալ ոլորտների ՕՈԻՆ կանոնակարգման սահմանափակումներն ավելի փոքր են Հայաստանում:

Գիտական նորույթը: Բացահայտվել են ՀՀ-ում ներդրումային գրավչություն և ներդրումային ներուժ ունեցող ոլորտները՝ 4 մեթոդաբանությունների համադրման հիման վրա՝ փաստաթղթային վերլուծություն, պետական կառավարման համակարգում անցկացված սոցիոլոգիական հարցումներ, արտահանման բացահայտ համեմատական առավելություն ունեցող ոլորտների բացահայտում և ՕՈԻՆ կանոնակարգման սահմանափակման ինդեքսի համեմատական վերլուծություն:

Եզրակացություն: Ներդրումների ներգրավումը հանդիսանում է յուրաքանչյուր երկրի կառավարության գործունեության անբաժան մասը, քանզի այն հնարավորություն է տալիս այլ տնտեսական սուբյեկտների ունեցած խնայողությունները ծառայեցնելու ի նպաստ տնտեսության զարգացման: Համաձայն առկա վերլուծությունների՝ ՕՈԻՆ ներհուսքը ընդունող երկրի վրա ունենում է ինչպես դրական, այնպես էլ՝ բացասական ազդեցություն: Դրական ազդեցությունների շարքում հաճախ նշվում է ՀՆԱ-ի աճը, տեխնոլոգիաների փոխանցումը, մրցունակության աճը, զբաղվածության մեծացումը և այլն, իսկ բացասականներից՝ ռեսուրսների հարստահարումը, շրջակա միջավայրի աղտոտումը և այլն:

Ներդրումների համար Հայաստանում նպաստավոր ոլորտների բացահայտման համար մեր կողմից իրականացվել է 4 քայլից բաղկացած մոտեցում:

Փատաթղթային ստուգման արդյունքում ի հայտ եկան մի շարք խնդիրներ. ներկայում մշակված և գործունեության մեջ է դրված միայն գյուղատնտեսության

ոլորտային զարգացման ռազմավարությունը, իսկ նախկինում մշակված 7 ոլորտների զարգացման ռազմավարություններում նշված միջոցառումները չեն կատարվել կամ թերի են կատարվել:

Պատկան մարմինների պատասխանատուների հետ հարցման արդյունքում պարզ դարձավ, որ ըստ ներկայում վարվող պետական քաղաքականության՝ Հայաստանի համար առաջիկայում ներդրումների համար նպաստավոր կլինեն 8 ոլորտներ:

Բացահայտ համեմատական առավելության ինդեքսի հիման վրա մեր կողմից բացահայտվել են ներդրումային գրավչություն ունեցող հետևյալ ոլորտները. Կենդանական ծագման արտադրանք, Բուսական ծագման արտադրանք, Պատրաստի սննդի արտադրանք, Հանքահումքային մթերք, Մանածագործական իրեր, Իրեր քարից, գիպսից, ցեմենտից, թանկարժեք և կիսաթանկարժեք քարերից, Ոչ թանկարժեք մետաղներ և իրեր դրանցից, Մեքենաներ և սարքավորումներ:

Ըստ ՕՈԻՆ կանոնակարգման սահմանափակման ինդեքսի՝ Հայաստանում ամենամեծ սահմանափակումներ առկա են օդային տրանսպորտի, հեռուստա- և ռադիոհեռարձակման ոլորտներում, դրան հաջորդում են տեղեկատվությունն ու կապը, տրանսպորտը, հաշվապահությունն ու աուդիտը և բիզնես ծառայությունների մատուցումը: Մյուս բոլոր ոլորտները՝ համաձայն այս ինդեքսի զերծ են սահմանափակումներից:

Այսպիսով, մենք բազմակողմանի վերլուծության միջոցով պարզեցինք ՀՀ տնտեսության ներդրումային գրավչություն ունեցող ոլորտները: Ընդ որում, եթե 1-ին, 2-րդ և 4-րդ քայլերով բացահայտված ոլորտները ներդրումային պոտենցիալ գրավչություն ունեցող ոլորտներն են, որոնք ներդրողների կողմից ընկալելի կլինեն առաջիկա տարիներին, 3-րդ կետում ներկայացված են ներկայում ներդրումային գրավչություն ունեցող ոլորտները, այլ կերպ ասած՝ այն ոլորտները, որոնցում ներդրում կատարելով ներդրողը կունենա համեմատական կամ մրցակցային առավելություն արտաքին շուկաներում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հեյդարի Մոհսեն, ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՈՒՂՂԱԿԻ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ, Թեկնածուական աստիճանի հայցման ատենախոսություն, 2018, էջ 32-33
2. Осеи Д. Д., ОБЗОР ТЕОРИИ ПРЯМЫХ ИНОСТРАННЫХ ИНВЕСТИЦИЙ (ПИИ), Вестник Ростовского государственного экономического университета (РИНХ), 2016 № 2 (54), стр.196-202
3. Akamatsu Kaname, The Flying Geese Pattern of Industrial Development in Newly Industrializing Countries, Essays in Honor of Dr. Ueda Teijir, Vol. 4, Research on Population and the East Asian Economy, 1943, pp. 565-577
4. Balassa B., Trade Liberalisation and Revealed Comparative Advantage, The Manchester School, Vol. 33, May, 1965, pp. 99-123

5. Hymer S. H., The International Operations of National Firms: A Study of Direct Foreign Investment, PhD Dissertation, Published posthumously, The MIT Press, Cambridge, Mass, 1976, p.43-44,
6. Kojima Kiyoshi, The “flying geese” model of Asian economic development: origin, theoretical extensions, and regional policy implications, *Journal of Asian Economics* 11 (2000) p.375–401
7. MacDougall, G. D. A. The benefits and costs of private investment from abroad: A theoretical approach. *Economic Record*, 26, 1960. p. 13–35
8. Marandu Edward E. , Ditshweu Tebo, An Overview of the Key Theories of Foreign Direct Investment: The Way Forward, *Advances in Social Sciences Research Journal* – Vol.5, No.12, 2018, p. 30-39, DoI:10.14738/assrj.512.5741.
9. Nayak, Dinkar; Choudhury, Rahul N. (2014): A selective review of foreign direct investment theories, ARTNeT Working Paper Series, No. 143, Asia-Pacific Research and Training Network on Trade (ARTNeT), Bangkok, p.8
10. Ozawa Terutomo, The (Japan-Born) “Flying-Geese” Theory of Economic Development Revisited—and Reformulated from a Structuralist Perspective, center on japanese economy and business, Working Paper Series October 2010, No. 291, <https://core.ac.uk/download/pdf/161436271.pdf>
11. Vernon R.. International investments and international trade in the product life cycle, *Quarterly Journal of Economics*, May, 1966, pp. 190–207, Dunn S.P., Pressman S., The economic contributions of John Kenneth Galbraith, *Review of Political Economy*, Vol. 17, No. 2, 2005, pp. 161-209
12. <https://stats.oecd.org/Index.aspx?datasetcode=FDIINDEX>
13. <https://stats.oecd.org/Index.aspx?datasetcode=FDIINDEX>
14. <https://www.mineconomy.am>

References

1. Heydari Mohsen, IRANI ISLAMAKAN HANRAPETOWT'YOWNIC HAYASTA-NOWM IRAKANACVOGH O'TARERKRYA OWGhGhAKI NERDROWMNERI HER'ANKARNERY', t'eknac'owakan astitwani haycman atenaxoowt'yown, 2018, e'j 32-33
2. Osei D. D., OBZOR TEORII PRJaMYH INOSTRANNYH INVESTICIJ (PII), Vestnik Rostovskogo gosudarstvennogo jekonomicheskogo universiteta (RINH), 2016 # 2 (54), str.196-202
3. Akamatsu Kaname, The Flying Geese Pattern of Industrial Development in Newly Industrializing Countries, *Essays in Honor of Dr. Ueda Teijir*, Vol. 4, Research on Population and the East Asian Economy, 1943, pp. 565–577
4. Balassa B., Trade Liberalisation and Revealed Comparative Advantage, *The Manchester School*, Vol. 33, May, 1965, pp. 99-123
5. Hymer S. H., The International Operations of National Firms: A Study of Direct Foreign Investment, PhD Dissertation, Published posthumously, The MIT Press, Cambridge, Mass, 1976, p.43-44,

6. Kojima Kiyoshi, The “flying geese” model of Asian economic development: origin, theoretical extensions, and regional policy implications, Journal of Asian Economics 11 (2000) p.375–401
7. MacDougall, G. D. A. The benefits and costs of private investment from abroad: A theoretical approach. Economic Record, 26, 1960. p. 13–35
8. Marandu Edward E., Ditsheuw Tebo, An Overview of the Key Theories of Foreign Direct Investment: The Way Forward, Advances in Social Sciences Research Journal – Vol.5, No.12, 2018, p. 30-39, DoI:10.14738/assrj.512.5741.
9. Nayak, Dinkar; Choudhury, Rahul N. (2014): A selective review of foreign direct investment theories, ARTNeT Working Paper Series, No. 143, Asia-Pacific Research and Training Network on Trade (ARTNeT), Bangkok, p.8
10. Ozawa Terutomo, The (Japan-Born) “Flying-Geese” Theory of Economic Development Revisited—and Reformulated from a Structuralist Perspective, center on Japanese economy and business, Working Paper Series October 2010, No. 291, <https://core.ac.uk/download/pdf/161436271.pdf>
11. Vernon R.. International investments and international trade in the product life cycle, Quarterly Journal of Economics, May, 1966, pp. 190–207, Dunn S.P., Pressman S., The economic contributions of John Kenneth Galbraith, Review of Political Economy, Vol. 17, No. 2, 2005, pp. 161-209
12. <https://stats.oecd.org/Index.aspx?datasetcode=FDIINDEX>
13. <https://stats.oecd.org/Index.aspx?datasetcode=FDIINDEX>
14. <https://www.mineconomy.am>

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Տիգրան Վլադիմիրի Հարությունյան
Լիլիթ Նորայրի Սարգսյան
Արմինե Վարդանի Գևորգյան

Համառոտագիր

Հոդվածի արդիականությունը: Միջազգային փորձը վկայում է, որ ճգնաժամային իրավիճակում հայտնված և հատկապես՝ փոքր տնտեսություն ունեցող երկրները սովորաբար ներքին ֆինանսական ռեսուրսների սակավության պատճառով ավելի արագ աճի կարողանում են հասնել օտարերկրյա ներդրումների ներգրավման շնորհիվ:

Հոդվածի նպատակն է բացահայտել ՀՀ-ում ներդրումների ներգրավման համար հնարավոր գրավիչ ոլորտները՝ բազմաթիվ վերլուծության հիման վրա: Այդ նպատակին հասնելու համար լուծվել են հետևյալ **խնդիրները**. վերլուծել առկա գրականությունը, բացահայտել տվյալ ոլորտում առկա փաստաթղթավորված խնդիրները, ամփոփ ներկայացնել ՀՀ պետական քաղաքականության ապագա ռազմավարությունը, վեր հանել ՀՀ արտահանման ներուժ ունեցող ոլորտները:

Մեթոդաբանություն: Հետազոտության համար տեսական, մեթոդաբանական ու տեղեկատվական հիմք են հանդիսացել հայ և օտարերկրյա գիտնականների կողմից մշակված գրքերն ու վերլուծությունները, տարբեր հեղինակների գիտական հոդվածներն ու միջազգային գիտաժողովների նյութերը, միջազգային կազմակերպությունների հետազոտությունները: Կատարվող հետազոտության ընթացքում կիրառվել են տվյալների հավաքման, վերլուծության և մշակման, սոցիոլոգիական հարցման, և այլ մեթոդներ:

Ստացված հիմնական արդյունքները: Բազմակողմանի վերլուծության միջոցով բացահայտվել են ՀՀ տնտեսության ներդրումային գրավչություն ունեցող այն ոլորտները, որոնցում ներդրում կատարելով ներդրողը կունենա համեմատական կամ մրցակցային առավելություն արտաքին շուկաներում: Ամփոփ արդյունքները ստացվել են հետևյալ 4 քայլից բաղկացած մոտեցման հիման վրա՝ փաստաթղթային վերլուծություն, սոցիոլոգիական հարցում, արտահանման ներուժ ունեցող ոլորտների բացահայտում, ՕՈՒՆ կանոնակարգման սահմանափակման ինդեքսի վերլուծություն:

Գիտական նորույթը: Բացահայտվել են ՀՀ-ում ներդրումային գրավչություն և ներդրումային ներուժ ունեցող ոլորտները՝ 4 մեթոդաբանությունների համադրման հիման վրա՝ փաստաթղթային վերլուծություն, պետական կառավարման համակարգում անցկացված սոցիոլոգիական հարցումներ, արտահանման բացահայտ համեմատական առավելություն ունեցող ոլորտների բացահայտում և ՕՈՒՆ կանոնակարգման սահմանափակման ինդեքսի համեմատական վերլուծություն:

Բանալի բառեր՝ ներդրումների ներգրավում, գրավիչ ոլորտներ, համեմատական առավելություն, պետական ռազմավարություն, արտահանման ներուժ, փաստաթղթային վերլուծություն, սոցիոլոգիական հարցում:

ВОЗМОЖНОСТИ ПРИВЛЕЧЕНИЯ ИНВЕСТИЦИЙ В РА

Тигран Владимирович Арутюнян

Лилит Норайровна Саргсян

Армине Вардановна Геворгян

Резюме

Актуальность статьи: Международный опыт показывает, что страны с малой экономикой в период кризиса могут расти быстрее за счет привлечения иностранных инвестиций.

Цель статьи - выявить возможные привлекательные сферы для инвестиций в Армении на основе многоступенчатого анализа. Для достижения этой цели поставлены следующие задачи: проанализировать имеющуюся литературу, выявить существующие документированные проблемы в данной сфере, представить

будущую стратегию государственной политики РА, определить сферы с экспортным потенциалом в РА.

Методология. Теоретико-методологической и информационной базой данной статьи послужили книги и анализы как армянских, так и зарубежных авторов, научные статьи и материалы международных конференций, исследования международных организаций. При анализе использовались методы сбора, анализа и синтеза данных, социологического опроса и другие методы.

Основные результаты. Путем комплексного анализа были выявлены отрасли экономики Армении с инвестиционной привлекательностью. Инвестируя в эти сектора, компании будут иметь сравнительное или конкурентное преимущество на зарубежных рынках. Сводные результаты были получены на основе следующего четырехэтапного подхода: документальный анализ, социологический опрос, определение секторов имеющих экспортный потенциал и анализ на основе Индекса регулятивной ограниченности ПИИ.

Научная новизна. Были выявлены отрасли, обладающие инвестиционной привлекательностью и инвестиционным потенциалом в Армении, на основе сочетания 4-х методологий: документальный анализ, социологические опросы, проводимые в системе государственного управления, выявление отраслей с выявленными сравнительными преимуществами в экспорте и сравнительный анализ на основе Индекса регулятивных ограничений ПИИ.

Ключевые слова: Привлечение инвестиций, привлекательные отрасли, сравнительное преимущество, государственная стратегия, экспортный потенциал, документальный анализ, социологический опрос.

OPPORTUNITIES TO ATTRACT INVESTMENTS IN RA

Tigran Vladimir Harutyunyan
Lilit Norayr Sargsyan
Armine Vardan Gevorgyan

Abstract

The relevance of the article: Best practices shows that countries with small economies in the period of crisis can grow faster due to the attraction of foreign investment.

The purpose of the article is to identify the possible attractive spheres for investments in Armenia, based on a multi-step analysis. **The following objectives** are set, for achieving this goal: to analyze the existing literature, to reveal the existing documented problems in the given sphere, to present the future strategy of the RA State policy, to identify the spheres with export potential in RA.

Methodology. The books and analyzes developed by both Armenian and foreign scientists, scientific articles and materials of international conferences, researches of

international organizations was the theoretical, methodological and informational base for this article. Methods of data collection, analysis and synthesis, sociological survey and other methods were used in this analysis.

The main results. Through comprehensive analysis, the sectors with investment attractiveness of the Armenian economy were identified. By investing in these sectors the companies will have a comparative or competitive advantage in foreign markets. The summary results were obtained based on the following 4-step approach: documentary analysis, sociological survey, identification of export potential sectors, and analysis based on The FDI Regulatory Restrictiveness Index.

Scientific novelty. The sectors with investment attractiveness and with investment potential in Armenia were identified on based on the combination of 4 methodologies: documentary analysis, sociological surveys conducted in the public administration system, identification of sectors with revealed comparative advantages in export, and comparative analysis based on The FDI Regulatory Restrictiveness Index.

Keywords: Attraction of investments, attractive sectors, comparative advantage, government strategy, export potential, documentary analysis, sociological survey.